

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՐԱՆԻ ԿԱՐԴԻՆԱԼԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

ՀԱՐԱՐՔ ՓԵՏՐՎԱՐԻ 14

Տարեկան դիմում 10 թուրքի, կէս տարեկան 6 թուրքի, Առանձին համարները 5 կոպէկով:

Քիֆիլիսով գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Փետրվարի 12-ին, երկրորդ, տանջալից հիւանդութիւնից յետոյ հանգիստ կնքեց իր մահականացուն

ԵՂԻՍԱԲԷԹ ԱԼԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԴՕԼՈՒԻՄԱՆԵԱՆԸ,

որի մասին հանգուցեալի ամուսինը՝ Մարկոս Եսայեան Դօլուխանեանը զաւակներին հետ միասին՝ խոր վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին: Ամբիճը շաբաթ օրը՝ փետրվարի 14-ին, երկուշաբթի ժամը 7-ին: Յուզարկաւորութիւնը բնականաբար (Մէլքիսեօսի փողոց № 9) դէպի Մոզնու ա. Գէորգ եկեղեցին տեղի կունենայ կիրակի, փետրվարի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին: Քաղաքը կը կատարվի Խօջի-վանքի գերեզմանատանը:

(2. 4.)

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Հեռուոր արեւելի ուսումնասիրութիւնը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խրմ-բարութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուս-Նապոլեոնեան հաւային ոյժի-բը. Պատերազմի շուրջը. —ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բար:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ուսումնական շրջանի հոգաբարձուները կարգադրել են, որ դպրոցների ուսուցիչ-ները ծանօթացնեն աշակերտներին ներ-կայ պատերազմի բռնի հետ և դրանով թէ գարթեցնեն հետաքրքրութիւն դէպի այն մեծ պայքարը ու մաքառումը, որ ամբողջ Ռուսաստանը առաջ է տանում իր արեւելեան թշնամու յարձակումների դէմ և թէ վառ պահեն հայրենասիրական զգացմունքը՝ պատրաստ լինելու ամեն տե-սակ զոհաբերութիւնների միջոցով կոխել յաղթութեամբ պատկերու համար:

Մամուլի օրգանները ամենամեծ տեղ են տալիս պատերազմին. լոյս են տես-

նում բազմաթիւ գրքեր, բրօշուրներ և քարտեզներ վերաբերեալ պատերազմա-կան բեմի նկարագրութեան և կուռղ կող-մերի բնորոշման. զանազան հիմնարկու-թիւններ ձեռնարկում են նուէրների ժո-ղովարարութիւնների վերաբերեալ խնա-մելու և բժշկական օգնութեան գործը լաւ կազմակերպելու համար:

Մեր հասարակութիւնը շատ աղքատ և թիւը հասկացողութիւն ունի այն տեղի-մասին, որ բռնկվել է պատերազմը: Հե-ռուոր Արեւելքը, որի մէջ մասնում են Ռուսաստանի արեւելեան հողերը, Ման-ջուրիան, Կորէան, Չինաստանը և Նա-պոլեոնեան առհասարակ շատ չեն հետա-գոտված և նրանց մէջ պարունակվող բը-նական հարստութիւնները միայն վերջին տասնեակ տարիներում սկսեցին երևան գալ և դարձնել իրանց վրա եւրօպական հասարակութեան ուշադրութիւնը:

Ռուսաստանի համար Հեռուոր Արեւել-քը առանձին նշանակութիւն ստացաւ ոչ միայն այն պատճառով, որ նա պարու-նակում է անբաւ հարստութիւններ և ներկայացնում է առեւտրական և արդիւ-

նիս», ցոյց տալով երկրային և հողերի սիրոյ զանազանութիւնը, և թողնում է նրան շնչա-սպառ:

Յետոյ նա երևում է ժողովրդի մէջ Շիրազի հրապարակի վրա և դառնում է ժողովրդին, կոչելով նրան դէպի հողերու կատարելութիւն. խօսում է կնոջ դրութեան մասին, ցոյց է տա-լիս կնոջ ստրկական դրութիւնը, մարդկանց զազանային վերաբերումը դէպի կինը, և պա-հանջում է մարդկային և հոգեւոր դաշնակցու-թիւն յանուն կատարելութեան: Կինը պէտք է հաւասար լինի իր մարդկային իրաւունքների մէջ այլ մարդուն: Բայց բարդագոյն կանայք չեն կարող դիմել դէպի այդ կոչումը, միայն Դուրեթը պոկում է իր երեսից չաղբան և հրապարակօրէն յայտարարում է իր ցանկու-թիւնը լինել այդպիսի մի մարդու կին և հե-տեւ նրա վարդապետութեան: Այլն օրհնում է նրան և զգացված ժողովրդի հետ հեռանում է:

Այս քննարկի պատկերը Փոքր թատրոնի դերասանուհի ա. Մուգիշ-Բօրօզէյնայի շնոր-հիւ շատ փայլուն դուրս եկաւ:

Անցնում է 5 տարի: Այլի հերոսների թիւը բազմանում է: Գիշեր ժամանակ, հինաւորը փրկաւորների վրա բարեբանի ժողով է կա-յանում, որոնք արդէն հաւածվում են Շահի կառավարութիւնից: Այդ ժողովում, բարեբ-անից մէկը՝ Ակիւ, ամենից համոզված և ջերմեամբ, ճառ է խօսում, որի մէջ խոս-տովանում է Այլի վարդապետութեան բարե-բար ազդեցութիւնը ամբողջ երկրի և ժողո-վրդի վրա: Կուրի է նա կոչում ժողովրդին, մասնացոյց է անում ժողովրդի ողբալի դրու-թիւնը, չորս կողմ տեղի ունեցող մեծամեծ անիրաւութիւնների, ժողովրդի չքաւորութեան, տուգանքների մեծութեան, աստիճանաւորների կաշառակերութեան վրա:

Ամբոխում երևում է մի կոյր դերվիշ, որ ասում է, թէ չարութիւնը ծանրաբեռնված է մարդկութեան վրա, բայց այդ չէ նշանակում, որ չարութիւնը յաղթանարել է. մարտը դեռ չէ վերջացել, նա միայն նոր է սկսվել: Այլն եկաւ, որ մարտն սկսել Արեւմտին, չարութեան սկզբի դէմ, որովհետեւ նա Որմզդի՝ բարութեան

նարեւարական փոխանակութեան համար մի մեծ ապարէզ, այլ և այն պատճա-ռով, որ Հեռուոր Արեւելքի նաւահան-գիւսների միջոցով նա մի լուսամուտ և դուռ է բաց անում Սիբիրի նահանգնե-րի համար, որոնք մինչև այժմ զրկված էին հարստութիւնից արտահանելու իրանց արդիւնքներից, զարգացնելու գիւղատնտե-սական և լեռնային իրանց արդիւնագոր-ծութիւնը և ներմուծելու կարճ ճանա-պարհով այն, ինչ որ ունեն Հեռուոր Արեւելքի հարուստ ծովափնեքը:

Մասնաւոր նախաձեռնութիւնը կարող է և պէտք է օգտվի ներկայ դէպքից տա-լու մի քանի ամիսի և լաւ կազմված ուսումնասիրութիւններ Հեռուոր Արեւել-քի մասին, ներկայացնելով երկրների և ժողովուրդների նկարագրութիւններ և պարզելով այն խոշոր քաղաքական և կուլ-տուրական հանգամանքները, որոնք ստեղ-ծեցին առանձին հետաքրքրութիւն դէպի Հեռուոր Արեւելք և պատճառ դարձան մի շարք մաքառումների, որոնցից ամե-նայետուրը և ծանրակշիւրը ներկայ պա-տերազմն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Ս Ո Ւ Ն

Մեր նոր գրականութիւնը արդէն այնքան երկար անցեալի տէր է, որ կարող է համար-ձակութիւն ունենալ ասելու, թէ ունի իր պատմութիւնը: Զիշդ է, դեռ չէ գրված այդ պատմութիւնը, բայց երբ և իցէ նա, առկա-հած, կը դրվի: Ոչ ոք չէ կարող գուշակել, թէ երբ կը գա այդ «երբ և իցէ»-ն, բայց մենք չենք կասկածում, որ ուր էլ դրվի հայոց գրա-կանութեան պատմութիւնը, երբ էլ դրվի, նրա

հերշտակն է: Այս խօսքերից ոգևորված, բարեբ-անքը երգում են տալիս, որ զենքերը ձեռքներին պէտք է կուռն Այլի վարդապետութեան հա-մար մինչև արեւան վերջին կաթիլը: Աւելի լաւ է մեռնել, քան թէ այսպէս ապրել: Մասնու-թեան շնորհիւ, գալիս են Շահի զինուորները: Տեղի է ունենում արեւահայկ կռիւ. երկու կողմից էլ ընկնում են. այդ բոլորում երևում է ինքն Այլի և ցաւօք սրտի համոզվում է, որ իր վարդապետութիւնը առանց զոհերի չէ կարող տարածվել, և զարմանում է, որովհետեւ նա չը պէտք է ունենար թշնամի, որովհետեւ մար-դիկ երբայր են Այլի տեսակէտից չը կան մեղաւորներ, այլ կան միայն թշուառներ:

Այս պատկերում պ. Տիգրի իր դերը իրօք շատ լաւ անցկացրեց:

Յետոյ Այլն իր բոլոր հետևողներին հետ կա-րանաւորվում է և ձգվում բանտ: Սկսվում է դատաստանը:

Այլն չէ աշխատում արգարացնել իրան, այլ միայն կրկնում է իր վարդապետութեան հի-մունքը: Դատաւորները նրան չեն հաւանում և դատապարտում են: Ամբոխ խռնվում է, յարձակվում և աղաւթում Այլին, բայց շուտով նրան դարձեալ կալանաւորում են և բանտ են ձգում: Դուրեթը գալիս է բանտ, ընկնում է Այլի գիրկը, խօսում է իր սէրի մասին, և յայտնում է իր ցանկութիւնը մնալ նրա հետ և մասնակցի լինել նրա ճակատագրին: Իսկ Այլն խօսում է հանդերձեալ կեանքի մասին և տալիս է նրան իր կտակը և իր վերջին հրաժարականը ժողովրդին, պատրաստվում է մահվան և ասում է. «Որտեղ մահն է, այնտեղ է և կեանքը»:

Մասնում է աստիճանաւորը և յայտնում է Շահի հրամանը, թէ կեանքը կը շնորհվի նրան, եթէ հրապարակով հրաժարվի Այլի վարդապե-տութիւնից և Բարե գլխին անէծք կար-դայ: Ամենքը հեռանում են նրանից, միայն մէկը (Ակիւն) մնում է նրա հետ:

Քաղաքի մէջ մնացած բարեբաններն Այլի հետ միասին, ձեռքերը վառած մոմերով, աը-խուր երգեցողութեամբ, տանում են պա-տեհասի տեղը: Այլին գնդակահար են ա-

մէջ առանձնապէս շեշտված կը լինի այն խո-շոր հանգամանքը, որ մեր գրականութեան մէջ, գոնէ մինչև այժմ, շատ թույլ է քննադատու-թիւնը, որ նա համարեա ոչինչ չէ կեղծարարող դեր չէ կատարել մեզանում: Պատճառները կը քննենք: Ասենք միայն այն հանրաժանօթ կ-ղելութիւնը, որ քննադատութեան տեղ մեր մամուլի մէջ գոյութիւն ունի կամ սանձարձակ իրերագրութիւն, կամ սանձարձակ յիշոցա-բանութիւն: Բոլորովին ազնաւած է անհաւա-քնադատութեան նշանակութիւնը և դրանից առաջացել է մի հիւսանդոտ երևոյթ, որ մեր օրերի դժբաղդ իրականութիւնն է: Գրողները հասել են արդէն այնքան ցաւալի դրութեան, որ նրանց գոհացնել կարող է միայն սանձաը-ձակ գովաբանութիւնը, և նրանք սարսափելի կերպով ցնցվում ու յուզվում են, երբ իրանց գրութեան մասին մի մի անգամ լոյս են տեսնում և այնպիսի քննութիւններ, որոնք միայն ներքոյների յատկութիւնը չունեն, այսինքն այնպիսի քննութիւններ, որոնց մէջ մի հիդիսակի արժանաւորութիւնները և պա-կասութիւնները ուշադրութեան արժանանալու հաւասար իրաւունք են ստացած լինում:

Այլանդակ երևոյթ, նրան չէ կարելի ուրիշ կերպ բացատրել, բայց միայն մի տեսակ հի-ւանդութիւն անուանելով: Մի հիւանդութիւն, որ ամենից առաջ այն է հաստատում, թէ գրականութիւնը չէ կարող առաջադիմել, չէ կարող կենսունակ և ուժեղ մնալ: Այն միջնա-դարեան նեղ, բարբարիկ անհամբերութիւնը, որ ցոյց են տալիս մեր գրողները դէպի ամեն մի գրութեան, որ իրանց ուղածին չափ չէ շօ-յում իրանց փառասիրութիւնը, արդէն մի շատ և շատ ողբալի նշան է, ներման և անկման մի ակնկեր փաստ: Վաթսուական թաւալա-նքին մի ուս երիտասարդ գրող, Պիտրեկը, համարձակութիւն ունեցաւ անգլիկ բարձրու-թիւնից ցած իջնելու Պուշկինին, որ ուսուց

նում բեմի ետեւ. նա մեռաւ թողնելով իր վարդապետութիւնը, ժողովրդի դէպի նա տա-ծած ջերմ սէրը և իր մահվան գեղեցիկ պատ-մութիւնը. նա մեռաւ, շրջապատված նահա-տակի պայծառ փառքով:

Այս բանաստեղծական պատմութեան մէջ անկայտնի երևում է Աւետարանի վարդա-պետութիւնը, բրիտանութիւնը խօ իւրամիջ առաջ է եկած:

Այլի մահից յետոյ գալիս է Դուրեթը և կո-չում է. «Ո՛ր, իրանի կանայք, գնանք նրանց մօտ, նրանք արեւան մէջ լողում են, նրանց արեւը նրանց վէրքերից սրբենք չաղբայով, և նրանց թշնմը լուսնանք մեր արտասուքի կաթիլներով»:

Եւ կանայք, ծաղիկներով և սիրով պնդված, գնում են այն գոյները, որտեղ կատարվեց անիրաւ պատճառ:

Այսպէս երգեց մեզ տ. Գրիգորիսկու մուսան, և երգը հնչում է սրտից սրտ և նրա գաղա-փարը մեծ է:

Թատրոնը լիքն էր. դերասաններն ըստիցս կանչում էին. ժողովրդի հրճվածքը մեծ էր: Անտրակտներում իմ ծանօթ մի ֆրանսուհի տիկին իրաւ նկատեց, որ պիտու է շատ քիչ տեղ է տրված բարեկամի ջաղաքական և տըն-տեսական կողմերին:

Ինչպէս յայտնի է, բարեբանի հետևողները ենթարկվում են աստիճան հալածանքներին, թէև նրանց թիւը օրեցօր աւելանում է: Բարեբան-րը չունեն ոչ մի կազմակերպութիւն. գուռ եւրօպական մտքով:

Մի քանի փորձեր, ինչպէս ասում է վերո-յիշեալ ֆրանսուհի տիկինը, որ երկու անգամ ճանապարհորդել է Պարսկաստանում, տեղի են ունեցել կառավարութեան հետ միացեալ ոյժերով կռիւ, ի միջի այլոց՝ հիմնել բանկ և այլն, բայց ինտելիգենտ դասակարգի պա-կասութեան պատճառով, չը կարողացան իրա-գործել այդ ամենը, որ կարող էր շատ մեծ գաղաւթ տալ, իրեն կուլտուրական միջոց: Բայց հալածանքների շնորհիւ այլ տեսակ չէր էլ կարող լինել:

Բ. Ս. Բուրուլյան

ազգային պարծանքն է և ուստի գրականութեան վիթխարի սիւներէն մէկը: Եւ նրան լսեցին, նրան այժմ էլ ուսու առաջադիմական շրջանները իրանց պարծանքն են համարում: Կարելի է ասել, որ եթէ Պիտաքիլի եթէ ոչ տաղանդը, գոնէ համարձակութիւնն ու սուր, այրող ոճը ունեցող մէկը եթէ հրաշքով դուրս գար այժմ մեր մէջ, նրան կը խաչէին մեր հեղինակներն ախ ու վաշերը, հարաշրջոյնները: Սա չէ դժբաղդութիւնը...

Բայց մեր հաւատարմացած ենք, որ այս գրութիւնը մեզ վերջնականապէս չի տանի անգուշ, չի թաղի այնտեղ: Պէտք է գալ, անշուշտ ժամանակը,— և նա հետո չէ,— երբ մեր գրականութիւնն էլ կենթարկվի համաշխարհային օրէնքներին, և այն, ինչ այժմ համարվում է միակ կարելի, համարդուութեան արժանի, կը սկսէ զգուշացնել մեզնի մէկին իրեն հիւանդոտ երեղծ: Ժամանակ է, որ դէպի մեր գրականութիւնն էլ լինի խիստ վերաբերմունք. ժամանակ է, որ մենք նրան նախքան արդէն փոքր ի շատէ հաստատացած, երեխայութեան հասակից դուրս եկած մի հիւսնարկութեան, որին կարելի է ասել ըստ պահանջների ենթարկել: Միշտ երեխայ մնալ, միշտ պաշտել գծուած անձնատիւններն հաշիւները— դա վերին աստիճանի մի վերաւորական հանգամանք կը լինէր մի ազգի համար, որ անա երկու դար է սովորում է, զարգանում է, աշակերտում է մեծ ազգերին: Մեր գրական հօրիգօնի վրա արդէն նշմարվում են ապագայի թոյլ նշանները. մենք սկսում ենք համակամ, որ մեզ հարկաւոր է լուրջ և խիստ վերաբերմունք դէպի մեր գործերը: Գրական հօրիգօն ասելով, մենք, ի հարկէ, հասկանում ենք հայոց ամբողջ գրականութիւնը և ոչ թէ նրա այս կամ այն մասը: Եւ անա մենք տեսնում ենք, որ Գ. Պօլսի մէջ սկսել են արժանապէս քննադատել այն սարսափելի ախտը, որ վերջին տասնամյակ տարիներում ճարակել էր ամբողջ մասը: Այդ ախտի անունն է իրենազգութիւնը: «Սուբսանդակ» լրագիրը այսպէս է նկարագրում նրան.

Բնիկները կը ծանուցանեն թէ ծաղիկի պոփի ամանակները մը կը տրիք մայրաքաղաքին քանի մը թաղերուն մէջ, մինչդեռ գրական ապարդիւ բարենտիկներուն միջավայրին մէջ կը տրիք ուրիշ համաժամարակ մը, զոր «իւրաքանչիւր» յատկանշական անունով կոչած է Պարսիկան:

Երկրորդ կամարին տակ նոր քան չը կայ: Քաւոր դար առաջ շատ սովորական էր լրագիրներուն մէջ, կարգ մը գրողներու—նոյնանքապէս ճանաչարան վարձարանի նախկին աշակերտներ— իրարու ուղղած գովազդները կարգաւ: Գրող մը գովելը փոխ տալու պէս քան մըն էր: Որովհետեւ գրծին մէջ ստակ չը կար, ապահով էր, թէ երկու շաբաթ կամ ամիս մը ետքը պիտի հաստատուէր գովազդը... տուրտուր ծանրործ: Միայն թէ այն ատեն գովազդները այս փոխանակումը տեսական քան մըն էր, ու յատկապէս անձնատիւնները գովազդելէ դուրս նպատակ չունէր: Այն ժամանակի գրողները, որ չուամբնին, չիւրիւրէն և Ալֆրէտ առ Միւսէի քանտատիւններուն ազդեցութիւնը կը կրէին, և Տիւնայի վէպերուն վեհանքն շունչէն ներշնչուած էին, իրենց հիւանդոտ գոհացումը մը միայն կը քաղէին գովազդէն: Գովազդներն այն նկարագրակալումը—այսինքն գովազդին այն տեսակը— որով Հիւսեանի ճանաչի հանքաքարն կամ Սրկայի անախն ազդեցումն անա ազդեցութիւն մը կը սպասէ թիւարդորդ—քանակորդ դարու գիւտերէն մէկն է մեր բնաշխարհի գրականութեան մէջ:

Մերայ և Սահակ իրար գոված են արդիօք. իշտատկութիւն մը չեմ գտներ որ եւ է գրքի մէջ: Մեծամարտը Գաւառիցապէս կեանքի օրագրութիւններուն մէջ պարսականի նմոյշներ շատ կան, սակայն գովազդները գրեթէ երբեք: Վեհեակի ու Վիլենայի Միլիարտները—որոնք սակայն գրական հրաշքերուն արտադրած են տասնիններորդ դարու կիսուն մօտ— իրենց մէջ մէկուն վրա խօսած ատենին անոր անուանը յարգելից մէկ յիշատակութեան առարկայ եղողը գեւ պատմութեան չէր պատկանէր:

Խեղճ Պետրոս Գուրեան. ինչեւ Մոլիէրի պէս քանատեղծ եւ դերասան միանգամայն ուղեցիր ըլլար՝ գործերով զեղեցիկութիւնները արժեքներու համար. վեհ ստուերը թող չը զայրանայ, երբ ըսեմ թէ անհունապէս անկի դիւրին էր ժամանակից պատրաստողներէն (spécialité) մեկուն ազդեցն քանի մը քառ փոխել, ու զանոնք լրագիրներուն մէջ հրատարակել իր ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելու նախաամիտունով գրական ներքողականներ: Եթէ Բիւրի դեպահաւորը եւ Սրօքի օշարակը դեռ չէին նկատուած քու ատենը, զոնէ Հոլլոուէի նշանաւոր դեպահաւորները արդեւ չը կային,— այն աղիւքը զոր «Փոնեք» մինչ, այսօր կը հրատարակէ— որպէս զի զանոնք գրական յօդուածի վերածելու զարգացող ունեցողը r  clame-ի ոգին ունեցող ու Եւստուած թուրքի խանութպան մը:

Սրանք մեզ յատուկ, մեր տոհմային պատկանութիւններ են և պիտի վերանան անշուշտ. ուրիշ կերպ ապրել ու զարգանալ չէ կարելի: Իսկ կը վերանան այն ժամանակ, երբ իր պատուական տեղը կը ընեն, իր զեկավարող դերը կը ստանան: Կոչման բարձրութեան վրա կանգնած քննադատութիւնը: Նրա մէջ միայն

պարսաւանք չի լինի, այլ և զովասանք: Գրողի ընդունակութիւնները գովել պարտաւոր է ամեն մէկը, բայց պէտք է լինի իսկական, արդարացի գնահատութիւն, առանց որի գովասանքը դառնում է փողոցային բեկում, իսկ բացասական կողմերի վատարանութիւնը՝ փողոցային հայտնանք...

ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Արդուին, յունվարի 21-ին

Անցեալ 1903 թուի դեկտեմբերի 18-ին, Արդուին, Մկրտիչ քանայ Աստուածատրեանց իր ծնեկից Մկրտիչ Անտարեսնցին Յուդիտայ Բասմաշեանցի հետ պատկերու յայտարարութիւնը ներկայացնելով ինձ՝ որպէս գործակալի՝ խնդրեց պատկի հրաման: Բայց ինչեւ Յուդիտան, համաձայն եկեղեցական չափաբանութեան լինելով 13 տարեկան եւ 12 օրվայ՝ այդ անչափահաս աղջկայ պատկը եւ ընդմէջ գտալ եկեղեցական եւ քաղաքացիական օրէնքներ, մտնանալ որ օրիորդ Յուդիտան փոխտ ու շատ թոյլ օրգանիկ մը տրի արդէն լինելով՝ մարդկային խոջի հակառակ երեսաց ինձ մտնել նրան 27 տարեկան կայտաւ մը երկուստարի ուժով բաղուկներին:

Արդուինում եւ նրա շրջանում անչափահաս աղջիկներին ամուսնացնելու փորձերու պատկեր մտնելը պատճառող սովորութիւնը հարկաւոր ինձ, իրեն մի դատարի հոգեւոր կատարարի, սրանից չորս տարի առաջ մի կանոնագիր կարգել 27 յօդուածները բաղադրելու անկող ծախսը եւ այլ անկարգադրութեանց, կարգաւոր ի 1-ն յունվարի 1899 ամի, ՍՊԵՐԵԼԻՆ, որը մի եւ նոյն ժամանակ տարածելի և ամբողջ գաւառում: Այս կանոնագիր 4 յօդուածով արգելած է աղջկանց հասակների նկատմամբ. «Ճանաչողութիւնը կատարվելու ժամանակ (այստեղ խօսքը միայն դեռ նրա շնորհաբանութեան մասին է եւ ոչ պատկի), բնութեան եւ աստուածային օրէնքի խախտումը՝ աղջկան տունուայն տանները ու կէս տարեկան պիտի լինի»: Այս կանոնագիրը իմ շրջանի բոլոր ծխական քանդանները ստորագրում են ի կատարումն եւ իմ կողմից գործ դրված խիստ միջոցների շնորհիւ, թէ քաղաքում եւ թէ գիւղերում բոլորովին վերացան մի շարք վատակար ու տղի սովորութիւնները եւ ամեն տեղ՝ ճշգրտութեամբ հետեւում են այդ կանոններին:

Յիշեալ օրիորդ Յուդիտայի պատկը մեր այս կանոնին եւ ընդգնդ գտնելով, վերջապէս մեծեղի ծխատեղ քանդանային տալ պատկի հրամանը: Գրանից յետոյ հանդէս եկան պատկարկող շրջապատող մէկ երկու չարամիտ անձինք, որոնք անձնական ստոր հաշիւներէն իրար դիմելով թող տուին իրանց խնդրագրերը սարքել իմ դէմ եւ ամեն կեղտոտ միջոցներին դիմել իրանց չար կերպը միայն յաջեցնելու համար: Բարեբաղդաւոր այստեղ՝ Արդուինում, բնաւ աղջկութիւն չը գտան: Կրքից մոլորված մեր այդ պարոնները վերջապէս յիշեալ Յուդիտային եւ նրան ուղղող երիտասարդին յունվարի 18-ին տարան Բաթում, ուր առանց մի ժամ հանգիստ վայելելու՝ նոյն երեկոյն, գիշերով միմեկին մէջ զարգացած քանդան կատարում է նրանց պատկը:

Աւտի ստիպված եմ հրապարակել յայտնել ի գիտութիւն իմ գործակալութեան տակ գտնվող բոլոր քանդաններին եւ ժողովրդին, որ արդուինցի Մկրտիչ Անտարեսնցին Բաթումում կատարված պատկից Յուդիտայ Բասմաշեանցի հետ՝ երբեք օրինակ չը վերցնեն եւ չը խախտուվեն դրանից, որովհետեւ եւ իմ 17 տարեկան պաշտօնակարութեան ընթացքում նոյն իսկ 14 տարեկան աղջկայ պատկը ոչ ինչ եւ կատարել եւ ոչ էլ կատարել տուել իմ ստորագրեալ քանդաններին. հետեւեալի պատճառով, իրեն գործակալ իմ շրջանում, երբեք էլ չեմ թոյլ տալ կատարել 14 տարեկանից պակաս հասակ ունեցող աղջկայ պատկը ոչ մի դէպքում, ուրիշն ոչ որ պատճառով: Թող զոք տեղ չը յոյնի այդ մասին ու պարապ փորձեր չանէ:

Գործակալ Արդուինի շրջանի
Յուդիտայ քանդան Կատարան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Երկաթուղային այն գիծը, որ պէտք է գնաց Երևանի մօտ եղած Ռուսիանուրու կայարանից դէպի Զուլֆա, արագութեամբ պատրաստվում է, առանց որ եւ գնադարութեան կամ նախապէս որոշված ծրագրի փոփոխութեան: Փոխադրվում են անաղին քանակութեամբ կառուցման համար անհրաժեշտ նիւթեր, պատրաստի, շինված կամուրջներ, որոնց միում է միայն պտուտակներով ամրացնել ու կանգնեցնել, մեքենաներ և այլն, և այլն: Այս տեսակ նիւթերի համար ճանապարհածախը առնվում է առանձին էժանացքում սակագնով:

Բաղադրարին խորհրդի քարտուղար պ. Չրէլանովը մի յայտարարութիւն է ներկայացրել թիֆլիսի պ. քաղաքագլխին, որով նա հարկաւոր է համարում այժմանից իսկ քաղաքային վարչութեան ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքը վրա, որ քաղաքի լեռնային մասերում շատ անկանոն յատակագծերով են ստեղծ շինվում, որով ապագայ փողոցները մեծ անյարմարութիւններ պիտի ներկայացնեն թէ քաղաքի ու թէ երթեկութեան համար: Ուստի հարկաւոր է այժմանից և եթ կանոնաւորման մասին մասնակց և որոշել փողոցների ուղղութիւնը: Որպէս զի այդ կարելի լինի իրարորայն, նախ և առաջ հարկաւոր է. 1) միջնորդել կառավարութեան առաջ, որ նա ճիշդ գիշանի

քաղաքին ս. Դաւթի լեռան լանջերը և 2) գնել մասնաւոր մարդկանցից այդ հողերին կից հողերը, որոնց վրա եւ շինութիւններ են կառուցանվում:

Թիֆլիսի ոստիկանապետը հաղորդեց պ. քաղաքագլխին, որ հասցեների քաղաքային գրասենեակը ներկայումս արդէն հանում է իր բոլոր ծախքերը և, ինչպէս փորձը ցոյց է տուել, հանգիստանում է մի վերին աստիճանի կարեւոր հիմնարկութիւն թէ ազգաբնակչեան և թէ ոստիկանութեան համար:

Գիւղատնտես պ. Արշակ Շահապարեանը ներկայացրել է երկրագործութեան մինիստրութեան մի ձեռագիր ընդարձակ շարադրութիւն հետեւեալ վերնագրով—«Բարձրադի արդիւնագործութեան հիմքերը և նրա ներկայ վիճակը երկրագործի վրա»: Մինիստրութեան գիտական յանձնաժողովն այդ շարադրութիւնը յանձնել է աղբնում Ն. Պ. Տարախիովին քննելու և դիւլուցում ներկայացնելու: Եթէ գիտական յանձնաժողովը արժանի համարէ պ. Արշակ Շահապարեանի գրութիւնը, այն ժամանակ դա պետութեան հաշիւով կը տպագրվի:

Կովկասեան ուսումնաբանական շրջանի պ. հոգաբարձուն, գիմնով Գիւղատնտեսական ընկերութեան, խնդրում է յայտնել իրան, թէ կան տեղեկութիւններ այն մասին, որ ուստաց կառավարութիւնը գրական մասնակցութիւն չը պիտի ունենայ Սէն-Լուի համաշխարհային ցուցահանդէսում:

Թիֆլիսի Քաղաքային Ըմբարդի կառավարչի գեղեցումից երևում է, որ առ 1-ն յունվարի 1904 թիւ քաղաքային ըմբարդում մնացել են յետ չը գնված գրաւականներ 16,574 հատ, 481,907 ռուբլի արժեքով:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան լրագիրը հաղորդում է, որ երկրագործական մինիստրութեան թոյլտուութեամբ գիւղատնտես պ. Աւետիք Սահակեան ուղարկվում է Եւրօպայի գնաւազան երկրները երկրագործական բերքերի վրաստող պարագիւնները և վրաստար միջնադարն ուսումնասիրելու համար:

«Ноб. Вр.»-ին գրում են Տօմիկից, որ այնտեղի պահեստի գիւտերներին պաշտօնի են կոչել: Պահեստի մէջ են եղել բաւական թիւով պրօֆեսորներ, դասաւորներ և լաբորատորիաների կառավարիչներ, որոնց նոյնպէս տարել են կուրի գաշտ: Դրանով թէ համալսարանի թէ քաղաքաւստեսան զարդից պարագիւնները դադարել են:

Ռուսական Կայսերական Աշխարհագրական ընկերութիւնը 400 ռուբլի է գրել Թիֆլիսի բուսաբանական պարտէզի վարչութեան տրամագրութեան առի, որպէս զի մի մասնագէտ ուղարկելի Կովկասի գեւ եւ չուսումնասիրված մասերը՝ ուսումնասիրելու տեղական բուսականութիւնը:

ԱՆՍՏԻՆԱՅԻՅԻ մեզ գրում են. «Երեւնալի, ամսին 10-ին, քաղաքի ժողովրդի կողմից կատարվից մաղթանք Հեռաւոր Արեւելի պտերագում ուսու գործերի աշխուրթեան և յաղթութեան համար, որից յետոյ մեծ ցոյցերով և օժտեցումներով ճանապարհ գեցին դէպի Հեռաւոր Արեւելի պտերագումը դաշտը տեղին թիւանութեանը բերկաւոր հրամանատար գեւ ներաւ-մայր Նիկիտինին: Այդ օրը վաղ առաւօտվանից քաղաքին բոլոր խառնութիւնը իսկ էին և «տանաֆները» իրանց դրօշակներով, տեղական «գաւուր-գունայի» նուագաժութեամբ հաւաքվեցին քաղաքային վարչութեան մօտի հրապարակի վրա: Այդտեղ եկան և պ. դաստապետը, քաղաքի աւագը, բաղնաթիւն մասնաւորներ և պաշտօնեաներ, բոլոր դասաւորութիւնները հոգեւորականութիւնը: Այդտեղ, ժամի 10-ին, ժողովրդի ցանկութեամբ հոգեւորականութիւնը ընդհանուր մաղթանք կատարեց ուսու գործերի աշխուրթեան և յաղթութեան համար: Նախ քան մաղթանքը ժողովուրդը նոյն հանդիսով և ցոյցերով գնաց յիշեալ գեղեցիկ Նիկիտինի տունը և ուսանելով ընդերք նրան մաղթանքը կատարվելու տեղը: Մաղթանքից յետոյ ճառեր խօսեցին պ. դաստապետը, հայոց յաղորդ՝ Բարդէս վարդապետը, ուսու քահանան, քաղաքային աւագը և ուրիշները: Ապա օրհնեցին այստեղից գնացող գիւտարականներին, ի թիւս որոց և յիշեալ գեղեցիկ Նիկիտինին: Ինքը գեղեցաւ խորին շնորհակալութիւն յայտնեց և զգայված խօսքերով

իր գոհունակութիւնը յայտնեց Ախալցխայի ժողովրդին»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Տեղիս թեմակալ առաջնորդ Գրիգոր Կալիստոս Գառնակեանը փետրվարի 4-ին, խուռն բաղութեան ներկայութեամբ, հանդիսաւոր մաղթանք կատարեց Նազանչեցոց եկեղեցում մեր Թագաւոր Կայսրի կեանքի երկարութեան և ներկայ պատերազմում ուստաց գործերի յաղթութեան համար: Առաջնորդը մի կարճ և ազգու բարոյ խօսեց: Բոլոր հայերը իրանց խանութները և գործարանները փակելով, եկեղեցի էին շատադիւ աղօթելու: Հանդիսի ներկայ էր և դասաւորապետի օգնականը»:

ԵՒՊՏՏՈՐԻՍՅԻՅ (Տաւրիկեան նահանգ) մեզ գրում են. «Փետրվարի 2-ին տեղիս սիրողները ներկայացրին հայոց զարդի օգնին Էլիզաբեթի շարքերում «По гривеннику за рубль» (Բուրլիկ տարե կոպէկ) 4 գործնութեամբ կօմեդիան, որ խաղումն է թրիմի բարբառով ուրիշ շատ պիւններին հետ միասին Սիմֆերօպոլի հայոց զարդի ուսուցիչ հանգուցեալ Պապեան: Ափոստ, որ այդ պիւնները, որոնց վրա հարկաւ շատ աշխատութիւն գործ դրված է, անախկ են մասնակցի, գիւտարապէս խրիմցու և նոր նախշանցու համար: Ներկայացումը շատ աշող անցաւ և բոլոր խաղացողները լաւ կատարեցին իրանց դերերը՝ շնորհիւ ըմբարդ պ. Գ. Կուշնարեանի եւսանդուն ջանքերի: Եւստաօրիայի հայոց զարդը պատկանում է այն բացառիկ զարդերի թիւին, որոնք կանոնաւոր պահպանում են իրանց գոյութիւնը: Մինչև այժմ երեցիկիս Պօղոս Սիմֆերեան իր սեփական միջոցներով պահպանում էր, իսկ սրանից յետոյ, շնորհիւ թատերաւոյնների, մինչև ուսումնական տարվա վերջը զարդը համաօրէն կը շարունակէ իր գոյութիւնը: Օր. Հայկանոյ Ներսիսեան (Ուսումնական Պետրօֆ) իր գեղեցիկ խաղի համար ստացաւ մի եւստական շեղ արկղ: Ներկայացման մասնակցում էին Եւկուլիվա, Բոգաշիվա, Սեմեյիվ, Կապրիվա և այլն (սրանք բոլորն էլ հայեր են)»:

ՕՁՈՒՅԻՅ (Լոռու գաւառ) մեզ գրում են. «Մօտ օրերումս մեզ մօտ մի գարնուրիկ սպանութիւն տեղի ունեցաւ: Տեղացի Բոչկոյանց Մարգի հարաւ (անցեալ տարի պաակած) գտնվել է իրանց տանը մօրթած օրը ցերեկով: Դործը հասել է մարմնաւոր խելանութեան»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ հասել է մի ցաւալի լուր: Տեղական գրացի երկու ազգութիւններ՝ հայերի և թուրքերի մէջ գնաւազան մարդիկ իրանց գրպանի, կօպէկներ՝ գուցէ և ողորմելի փառաւորական կրքերի համար ձգտում են երկպառակութիւն սերմանել, անտաղծիմ, ատելութիւն ցանկել: Նախկին քաղաքաւորապ. Զաւաղ Իշխանեանի պաշտօնաւորել լինեց յետոյ իրանց քաղաքաւորաւ ընտրվից վարչութեան նախկին անգամ Զաւառ ըէկ Սաֆարալի-ըէկով և այդ ընտրութեամբ բացվեց վարչութեան մի անգամի տեղ: Այժմ վերեւում յիշած մութ մարդիկ, ցանկալով ընտրվի վարչութեան անգամ, գնաւազան ցեղային ու ազգային կրքեր են գրգռում, որպէս զի ընտրող ժողովուրդը մոռանայ իրանց անաղտրութիւնը և ընտրութիւն անէ միայն ցեղային կրքերի, յիշար ինտանկաների աղեղեցութեան տակ: Յոյս ունենք, որ Շուռն մէջ եղած բանիմաց մարդիկ չեն թողնի, որ պաշտօն ջրում ձուլ որսան այդ մութ մարդիկը և ամեն ջանք գործ կը դնեն ընտրել քաղաքի շահերը սրտին մօտ ընդունող, գոնէ մի բիշ կը թրված մարդու լինի դա հայ, թէ թուրք—այդ բոլորովին մի և նոյն է:

Ջիւանդիքի գաւառի ՄԵՐՇԵՆ գիւղից մեզ գրում են. «Մեզ մօտ մի ցաւալի դէպք պատահեց: Գիւղիս ծխաւոր քահանան Նախկին էր իր որդուն մի գեղջկանու հետ: Հարսանիքի օրը քահանան պահանջում է աղջկայ հօրից օծիտի շաքում և «կամօք», սպանալով, հակառակ դէպքում, հրաժարվել աղջկանից: Նամուսաւոր գեղջուկը ուղեւորվում է Շուռն կատարելու տեղ-հօր քահանայի և ճանապարհին խիստ ցրտից ցրտահար է լինում մեռնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ-ՆԱՊՈՐՏԱՎԱՆ ՆԱՒԱՅԻՆ ՈՅՁԻՐԸ

Մեր նախորդ յօդուածով՝ աղեղեցութիւններ էինք տուել մեր ընթերցողներին ուսու-եւստաց

նախան նաւալին ոյժերի մասին: Աւելացնենք, այժմ, մի քանի ուրիշ ծանօթութիւններ, տեսնենք, թէ քանիք է համարուում ռուս կառավարութեան Վլադիվոստոկի նաւահանգստում ունեցած մարտանաւերի թիւը: Վլադիվոստոկեան նաւատորմը բաղկացած է չորս կրէյսերներից, որոնց անուններն են. «Բիւրիլ», «Վրոնցոյ», «Ռոստիս», «Սեւերսկի»: Այդ նաւերը ինչպէս յայտնի է, չէին մասնակցել Պորտ-Արտուրի նաւամարտին, որովհետեւ պատերազմի դաշտից հեռու էին գտնուում: Նրանք ստորգետնի մէջ փակուած էին: Բայց, բայց այժմ սկսած լինելու են իրանց գործունէութիւնը: Բացի այդ նաւատորմից, Ռուսաստանը ունի մի ուրիշ նաւատորմ՝ այդ Սև ծովի նաւատորմին է, որը բաղկանում է հետեւեալ մարտանաւերից. մի գրանատը՝ «Յուպրիա», որի տարողութիւնը (tonnage) է 12,880 տոնն: Զինված է 4 մեծ 11 միլիակէ և ուրիշ փոքր արագահիշ թնդանոթներով: Նախ մարտական թիւը (équipage) է 732: Արագութիւնն է 18 հանգոյց (узлов) մի ժամում: Մի գրանակիր կիսիսէ՝ «Գիւմիսի» Դոնից» որի տարողութիւնն է 5,900 տոնն, արագութիւնը՝ 16 1/2 հանգոյց և մարտական թիւը 510: Մի կիսիսէ՝ «Աւորա» 6,740 տարողութեամբ: 7 Կեսրայի ականաւաւերը հաւաքուած են 4 ականաւաւեր: Ուրեմն Սև ծովեան նաւատորմը բաղկացած է 14 մարտանաւերից:

Մենք անցեալ անգամ խոսելով հայտնական նաւատորմի մասին, առաջ չէինք բերել նաւերի անունները: Ընթերցողների դիւրութեան համար ահա լրացնում ենք այդ թիւերը: Մենք ասել էինք, որ հայտնակները ունէին ճակատամարտում առաջին գծի վրա կեցող, ու նոյն իսկ անդիպարան մի և նոյն տիպի նաւերից էլ որոշ տեսակէտներով փերզանց՝ 6 գրանատը՝ 14-ի չափ պարագայով կիսիսէներ՝ որոնք կոչվում են. «Տակագոգ», «Կաւագոգ», «Շիւսոգ», «Երուկո», «Բիւլու», «Հաւսաստ», «Մաւսոսիս», «Սեւիս», «Նաւիս», «Տակագի», «Սիսսակ», «Յուսիս», «Մուս», «Ակալի», Սրանց առաջին չորսը խոստ արագութեամբ են. ժամում 22—23 հանգոյց. չորսը՝ ժամում 20 և անցեալ վեցը՝ 16—19 հանգոյց: Իսկ վերջերս, Արագոսների հանրապետութեան համար շինված ու Անգլիայի միջոցով հայտնակներից գնված երկու կիսիսէները կոչվում են «Նիսիս» և «Կաւագոգ» որոնց տարողութիւնն է 7,700 տոնն և արագութիւնը՝ 20 հանգոյց ժամում: Հետագրներից մեր ընթերցողները գիտեն, թէ այդ նաւերը հասել են արդէն Նապոլի, և հապոնական կայսրը՝ Միկադոն նրանց բերող Անգլիայի հրամանատարներին մեծ պատուով է ընդունել:

Նապոնական ականաւաւերի թիւը հասնում է մօտաւորապէս հարիւրի, որոնք շինված են թէ՛ Նապոլիում—Նոսիում, Շիւսո կամ Թոնիկ—Ռոֆոն նաւաշինարանների կողմից—և թէ՛ Նապոլիայի ազգային նաւաշինարաններում: Այս ականաւաւերի թիւում կան ժամում մինչև 30 հանգոյց արագութեամբ գնացող նաւեր:

Յաջորդ անգամ մենք կը ջանանք մի գաղափար տալ մեր ընթերցողներին թէ ինչ է զբահաւորը, կրէյսերը, ականաւաւը, ինչ տարբերութիւն կայ նրանց մէջ և ինչ գործ են կատարում նրանց իւրաքանչիւրը:

Հաւեն

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԶԸ

Նապոնական դիպլոմատի ցուցմամբ: Բերլինի լրագրողներից մէկը թղթակցի տեսակցութիւն է ունեցել Պետերբուրգի հայտնական նախկին դեսպան Կուրիսի հետ: Թղթակցի հարցմունքին, թէ ինչպէս եղաւ, որ պատերազմ ծագեց, չը նայելով ռուսաց կառավարութեան խաղաղասէր արձագանքութեան, դեսպանը պատասխանեց. «Պէտք է իմանաք, որ տարբերութիւն կայ Պետերբուրգի մէջ մի կողմից, և Վլադիվոստոկի ու Պորտ-Արտուրի մէջ միւս կողմից: Պետերբուրգում ամենքը խաղաղ էին արամադրված, բայց Պորտ-Արտուրի մէջ բազմացնում էին նաւատորմը և զօրքերը և ամեն բան պատրաստվում էր անհետաճելի պատերազմի համար: Պետերբուրգում հազիւ էին իմանում, թէ ինչ է կատարվում Նապոլիայի մօտերում և թէ ինչպէս Մանչուրիայում գործդառնում են պատերազմական դիտարկութիւնները: Ես չէի բաւականանում իմ կառավարութեան կարգադրութիւնների պաշ-

տօնական կատարմամբ և իմ անձնական նախաձեռնութեամբ աշխատում էի շտապեցնել ռուսական պատասխանադիրը մեր վերջին յիշատակագրին: Մինչև որ ես Պետերբուրգում էի, ես չը կարողացայ տեղեկութիւններ ստանալ այն յիշատակագրի բովանդակութեան մասին, որ Պետերբուրգի կարգիչները պատրաստել էր Նապոնական կառավարութեան առաջարկութեանը պատասխանելու համար: Այդ յիշատակագիրը ուղարկվեց ծովագետ Ալեքսէվին, որը, ինչպէս ասում են, ուղարկեց Տոկիո, ուր նա ամենեւին չը ստացվեց»:

Սակայն, ինչպէս տեսնու, ռուսաց կառավարչական հարցադրութիւնը ինչպէս այլ կերպ է բացատրում:

Սպասվում է մեծ նակասման: «Daily News» լրագիրը հայտնում է, որ Նապոնական պատրաստութիւնները է տեսնում ափ իջեցնելու 300,000 մարդ: Չեմուկում այժմ ափ է իջեցրած 20,000 մարդ և սպասում են, որ շուտով մեծ ոյժեր ափ կիջնեն Նիւչուան: Ենթադրում են, որ մօտիկ ապագայում Կորէան կը լինի պատերազմական մեծ գործողութիւնների առարկա:

«Times» լրագիրը ասել է իր սեփական թղթակցի հետեւալ բազմաշուն հետազոտ. «Պորտուրգ եւ տալիս բրիտանական կառավարութեան ձեռքից բաց չը թողնել միակ դէպքը, որ ներկայացնում է գործերի ներկայ վիճակը, ուսումնասիրելու նշանակող ուղի մագիտական ծրագրի յաջողական ֆազիսները»: Այդ փոքր ինչ խորհրդաւոր հետազոտը բացատրում են նրանով, որ հայտնակները դիտարկութիւն ունեն տալ ուսմանը կըտրական ճակատամարտ մօտիկ ապագայում: Նոյնպէս և Նիւ-Եորքի «Հէրալդ» լրագիրը հայտնում է, որ ուսմանը, իրանց հերթին, կենտրոնացնում են իրանց ոյժերը Նապոլի գետաբերանը բռնելու և կառուցանում են մարտիկների, զինատիրոջ թնդանոթները: «Hoboe Время», որից քաղում ենք այս լուրը, կցում է, թէ այդ ամենը ամերիկական լրագրողների կարծիքն է, բայց ապագան ցոյց կը տա, թէ որքան ճշգրիտ են նրանք: Այս ևս պէտք է յիշել, որ Նապոնական պատերազմի կարիքները համար 250 միլիոն ֆրանկի փոխառութիւն է բաց արել Նապոնական բանակը ստորագրել է 20 միլիոն ֆրանկ, աշխուճականների բանակը՝ 19 միլիոն ֆ., և ինքը միկադոն՝ 20 միլիոն ֆրանկ:

Գիտաւ խնդիր: Այս վերնադրով մի նամակ է ասել մի բժիշկ «Hoboe Время» լրագրում, որ ցոյց է տալիս, թէ որքան մեծ դժուարութիւնների պէտք է հանդիպեն ռուսաց զօրքերը Հեռուտը Արեւելքում կենսական միջոցների պահպանութեան և թանգութեան պատճառով: Պորտ-Արտուր և Դալիս քաղաքները իրանց ուսմանը և միջոցները ստանում են Զի-ֆուլց, Օդէսայից և կամ Վլադիվոստոկից ու Նապոնականից: Մանչուրիայում կենսական միջոցների գները նոյն իսկ խաղաղութեան ժամանակ միշտ բարձր են եղել, իսկ երկու-թուրու գծի վրա, բոլորովին անտանելի (գաւառները—60 Կ. շիշը, խոլի միջի կը հատ կտրւէ—1 Կ.): Այժմ, երբ պատերազմ է, գները սարսափելի կերպով պէտք է բարձրանան: Եւ սակայն ինչ ուժիկ է ստանում ռուս օֆիցերը կամ զինուորական բժիշկը: Նրանց ստացած ուժիկը հազիւ բաւական լինի 15 օր կերակրվելու աշգլիսի թանգութեան ժամանակ. մնացած ժամանակը պէտք է քաղցած մնան: Ռուս բժիշկը այդ պատճառով հրաւիրում է ռուսաց հասարակութեան լուրջ ուշադրութիւնը այն բանի վրա, որ մտածեն կարգադրել ուսմանը ինչպէս: Ամենքը զբաղված են, ասում է նա, նաւատորմը ուժեղացնելու գործով և կարծէք, մոռացել են կենսական միջոցների թանգութեան հարցը, մանաւանդ որ լուր է ստացվել, թէ չինացիները հրաժարվում են ուսմանը և գրաստ հայթայթել զօրքեր: Ահազին հեռուտը տարածութեան պատճառով, միջոցները փոխադրութեան գործը շատ դժուարացել է, իսկ մի քանի ամսից յետոյ աւելի ևս կը դժուարանայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջարկվում են եղել ժընէվում քայ անել «Ժամ-ժաբ-Ռուսոյի արկիվը», ուր հաւաքվին «Ընկերական դաշինքի» հոլախաւոր հեղինակի ձեռագրները, նրա նամակները, նրա մասին եղած գրքեր ու պատկերները՝ կարծւ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է կամ կապ ունի նրա կենսագրութեան ու գործունէութեան հետ: Ժընէվի կանոնի վարչական խորհուրդը վճռել է այդ արկիվի համար յատկացնել քաղաքի հասարակական գրադարանների քաղաքի ղաջիճներից մէկը և տարեկան որոշ օժանդակութիւն տալ:

*

Վերջին ժամանակներս էլիսօնը յայտնի է, որ շուտով պատրաստ կը լինի իր մի նոր գիտքը, լուսանկարչական մոնթե՛նեալին (կամբրա-օքսլիւր) է այդ նորութիւնը, միայն ձեռնարկի հետ: «Ուոլ-սենսկը» ասէր է ծառայել խոսակցի պատկերը էլքորա-կանուկան Յիլերով միւս կողմի «Կամբրա-օքսլիւր» արտադրանքը համար, իսկ ձեռնարկը արդէն խոսելու համար: Գրանով խոսողները էւ իրար կը տանեն և իրար ծայրը կը լսեն տնային տարածութիւն իրարից բաժանված լինելով:

«ՄՇԱԿ» ՀՆՈԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՅՈՒՆ

12 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գիտերա-մայր Փետրի հետադիրը փետրվարի 12-ին, զիւսուր շտաբին, «Այսօր ժամը 1-ից մինչև երեք ու կէսը գիշերվայ, թշնամին նորից յարձակվեց Պորտ-Արտուրի վրա, բայց յետ մղվեց: Մանրամասնութիւնները կը զեկույցանան»:

ՇԱՆԳՅԱՅ (Քէյթեր): Լուրերին նայելով չինաց արտաքին գործերի մինիստրութիւնը թոյլատրեց ռուսաց «Մանչուր» մարտանաւին մնալ Շանհայում: Նաւը, սակայն, պարտաւոր է հանել զեկը և շուրջ չարձանել:

ՎԱՇԻՆԳՏՈՆ (Քէյթեր): Գէի ստացած տեղեկութեան համաձայն, Նապոնական դաշնակիր է կրել Կորէայի հետ, որով Նապոնական հրաշխուրդում է Կորէայի անկախութիւնը և անձնամակնութիւնը:

ՏՈԿԻՈ (Քէյթեր): Գործողութիւնների ընդհատումը ծովի վրա առաջ է գալիս զիւսուրապետ վառ եղանակի պատճառով Պէշիւան ծովածոցում, ուր այժմ ստանիլ ձիւնային ռուք է մշուշներ են արժում:

ՀՈՒՄ: Պոպոյ Բոման» թերթը, խոսելով ռուս-հայտնական ընդհարման մասին, կարծիք է յայտնում, թէ խաղաղիցները չը պէտք է համակրեն Նապոնական անկախութեան Ռուսաստանին: Արեւելեան այս հարցում անկի նախաձեռնար է, որ Ռուսաստանը կարողանայ ի կատար ածել իր ծրագրերը: Մանչուրիայի անապատները շինացնելու և համաշխարհային առեւտրի շահերի համար հարցադրակցութեան ուղիներ հարթելու վերաբերմամբ:

ՄԱՆՍԵՐԱՍԻԱ: Երկու հեռակ գնդեր փետրվարի 11-ին ուղարկվեցան Կանադեան կղզիները:

ՄՏՈՒՇՈՒՄ: Ռուս-հայտնական պատերազմի պատճառով բէլախտապը յայտնեց Կարելիոնու, Յարէկուսե, Օլիոն և Մոսկօլու քաղաքները իրեն զինուորական նաւահանգիստներ:

ԱԿՎԻՆԱ: Սատուի երկրաշարժը Մարիանո դը-Մարսիում մեծ ֆրանսի հայրենց:

ՄՈՍԿՎԱ: Պետերբուրգից եկաւ ձեպակաւոր հինգ վազոնից բաղկացած, որի տարացնելու սխառնը բոլորովին նոր է, այն է տարացնելու վրում է նոր հանրված մի գործիքով, որ կոչվում է սատուրատոր և որը հաւանութիւն է գտել յատուկ մասնագործի կողմից:

ԿԻՇԻՆԵՎ: Այսօր գաղափարական պալատը քննեց Կիշնեւի մէջնաներ Դանիէլի և Եակով Պետրեֆովների գործը, որոնք մեղադրվում են իրանց և Իւլիա Կրուպնիկովների սպանութեան և Ուլանիսկուսի վերաբերմունքի մէջ: Երկու Պետրեֆովները գաղափարոված են տաժանակիւր աշխատանքի չորս տարի ժամանակով: Բաղաքացիական պահանջները անանց դոնացման են թողնված:

ՊՐՏՏ-ԱՐՏՏԻՐ (սեփական թղթակցից): Փետրվարի 11-ին, ժամը մէկի մօտ հայտնակցիները յուսահատական փորձ արեցին փակել ներքին նաւահանգիստի և աւազանի մուտքը, որի համար չորս առեւտրական շոգնաւ, ականաւաւերը հովանաւորութեամբ, ուղղվեցան դէպի մուտքը երկու կողմերից: Այդ փորձը նկատեց մուտքում կանգնած «Բէտովիան» զբահաւորը, որ, անմիջապէս, կրակ քայցեց այդ նաւերի վրա: Վերջինին օգնում էր բերդային արտիլլերիայի կրակը: Թնդանութեամբ թիւը շարունակվեց մինչև տուս.օտեան ժամը 5-ը, որից յետոյ լուրացան միայն առանձին պաթիւններ: Նապոնական փորձը չափողվեց: Բոլոր չորս շոգնաւները ջրատոյդ արկիցին, երկուսը այրվում են: «Բանան» և «Նօվիկ» կրէյսերները դուրս եկան հարձակու ա-կանաւաւերին Տոկիոյ թիւին կայ, որ ականաւաւերի մէջը ընկնելով է: Առաւօտեան ժամը 9-ին մօտ, Պորտ-Արտուրին մօտեցաւ հայտնական մեծ ուժանի մի հակադրա: «Նօվիկ»-ը և «Բանան» հրաման ստացան վերադառնալ: Նապոնական Եակադրան առանց թնդանութեամբ հեռացաւ Դալիսի ուղիւ: Պետերբուրգը:

ՊԱՐԻՉ: «Petit Parisien» թերթը հրատարակել է գերմանական կանցլէրի խօսակցութիւնը մի ֆրանսիացու հետ: Կանցլէրը հետե-

ւեան ասաց. «Բացի սօցիալ-դէմոկրատներից, Գերմանիայի բոլոր կուսակցութիւնները համաձայն են իրանց մէջ, որ բարի յարաբերութիւնները գէպի Ռուսաստանը պէտք է պահպանեն: Բարի համաձայնութիւնը Ռուսաստանի հետ Պրուսիայի և Գերմանիայի հին աւանդութիւնն է կազմում: Այն յայտարարութիւնը, թէ գերմանական հասարակական կարծիքը թշնամաբար է տրամադրված Ռուսաստանի դէմ կարող էր անկիւ կատարելագէտ անձնօթ լինելով մեր անցեալի և ներկայի հետ»: Բեւովը ասլո ցանկութիւն յայտնեց, որ ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը շարունակէ գոյութիւն ունենալ և այսուհետեւ, դոնէ մինչև այն ժամանակ, ցորչալի նա կը պահպանէ իր պէմանքը բնաւորութիւնը, որ ուղղված է ընդհանուր խաղաղութիւն պահպանելու:

ԲԵՐԼԻՆ: Գիտերա-աղիւտանու Կուրօպատ-կինի նշանակումը մանչուրական գործի հրամանատար եռանդուն կերպով քննադատվում է այստեղի մամուլի և հասարակութեան կողմից և ողջունվում է խորին հաճոյքի զգացմունքով: Հաւատարմացում է յայտնվում, որ այսուհետեւ յաղթութիւնը թշնամու գործի վրա երկար պատեւ չի տալ իրան:

ՊԱՐԻՉ: Յրանիայի ազատամիտ կուսակցութիւնը պատգամաւորների ժողովում քուէարկեց 500 ֆրանք ռուսաց վիրաւորների օգտին, ցանկանալով դրանով հաստատել իր համակրութիւնը դաշնակցութեան Ռուսաստանին: Մինաւոր ձախակողմեան դէմօկրատիական կուսակցութիւնը քուէարկեց համակրութիւն ռուսաց ցամաքային զօրքերին և նաւատորմին, որոշելով սպարապէս 500 ֆրանք ռուսաց վիրաւորների օգտին:

ԼՈՆԴՈՆ (Քէյթեր): Մովային միսիսարութեան նախաշաւով նախատեսվում է եկող տարի երկու պատերազմական նաւերի, 4 զբահաւոր կրէյսերների, 14 կոտորիչ ականաւաւերի և 10 ընդծովեայ նաւակներ շինութիւն: Նաւերի ծառայողների թիւը ենթադրվում է աւելացնել 4000 մարդով:

ՊԱՐԻՉ: Լուրէ նախադահի ամուսնը յանձնել է տալ 500 ֆրանկ ֆրանսիական տիկնանց դաշնակցութեան և 500 ֆրանկ կանանց դաշնակցութեան, որոնք ստորագրութիւն են բացել վիրաւորված զինուորականների օգտին:

ՄՈՍԿՎԱ: Մոսկվայի եկեղեցիները յատկացրին Կարմիր խաչին 150,000 ռուբլի, վանքերը—26,000 ռուբլի: Այսօր ուղարկվեցին Հեռուտը Արեւելք իվերեան համայնքի սանիտարական խումբը 56 հոգուց բաղկացած և 10 վագոն տաք հագուստ: Մոսկվայի նահանգական զէմսովային ժողովը որոշեց միանալ այն ձեռնարկողներին միջնորդութեան, որոնք թոյլատրութիւն են խնդրում կառուցանել Մոսկվա-Բօգոբոզկի կիլեթայ երկաթուղին և միջնորդել, որ երկաթուղին Բիւլիլի վրա կրելվորվից ճիւղ ունենայ դէպի Կիշն: Գիտերա-աղիւտանու Ալեքսէվ ուղարկել է հեռուտը հեռագիրը Մոսկվայի նահանգական զէմսովային ժողովին. «Հեռուտը Արեւելքի զօրքերի և նաւատորմի հետ ի բոլոր սրտէ շնորհակալ ենք Մոսկվայի զէմսովային հայրենական ողջոյնի համար: Բոլոր ռուս քաղաքացիները համակրութիւնը ոգևորում է մեզ անպայման չը խնայելով մեր կեանքը, պաշտպանել, ի փառս պաշտել թագաւորի, թանգադին հայրենիքի պատիւը և արժանապատուութիւնը: «Վարնագի» և «Կորէիցի» սխաղագրութիւնը ծառայում է իրեն գրաւական, որ փառաւոր ռուսական զինուորական զօրութիւնը անխախտելի է: Աստուած, որ միշտ պաշտպան է արդար գործի, կօգնէ մեզ արժանաւոր կերպով պատժել ուխտադրութիւնը և վերադարձնել Ռուսաստանին ցանկացեալ իրադրութիւնը:

13 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն հրովարտել, տրված գիտերա-աղիւտանու, գիտերալ ինքնանտերիայի Կուրօպատիկին անունով. «Ալեքսէյ Նիկոլայիւիչ, 1893 թիւից լինելով զինուորական վարչութեան պետ, դուք ձեզ յատուկ աշխատանքները համար և տոկոսաւորութեամբ եռանդով աշխատում էիք ի կատար ածել ինձանից հաւանութիւն գտած մի շարք բարենորոգութիւններ՝ զօրքի և նրա կառավարութեան կատարելագործութեան մասին և արթուն պահպանում էիք Ռուսաստանի զինուորի ոյժերի ուղղական պատրաստանիքները: Ձեր աշխատութիւնը դեռ չէ աւարտված, բայց հասել է ժամը, երբ ինձ վիճակվեց կոչել իմ սիրագործ զօրքի մի մասը ի պաշտպանութիւն Ռուսաստանի պատուի և արժանաւորութեան և նրա վեհապետական իրաւունքների Հեռուտը-Արեւելքում: Իմանալով

